

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

(Ծննդյան 100-ամյակի առթիվ)

ՀԱՅԿԱՆ ԳԻՒՄԻՆՈՍՏԻԿԱՆ Կ. Ա. ՄԵԼԻԻՔ-ՕՂԵՆԻՅԱՆՅԱՆ

Հայ բանասիրության, լայն առումով հայագիտության, ամենաականա-  
վոր դեմքերից է մեծ գիտնական Մանուկ Խաչատուրի Աբեղյանը:

Զկա հայագիտության մեջ համարյա մի բնագավառ, որին ընդհուպ մո-  
տեցած և իր ծանրակշիռ խոսքն ասած շլիճի ականավոր գիտնական Մ. Աբեղ-  
յանը: Նրա վիթխարի ժառանգությունը բազմաթանր է, իր ժամանակին վճռո-  
ղական դեր է կատարել, այսօր էլ պահպանում է իր մեծ մասի անուրանալի  
արժեքը, որոշ բնագավառներում՝ գերիշխանությունը: Նրա աշխատությունների  
գիտական արժանիքների հարատևության պատճառն այն է, որ Մանուկ Աբեղ-  
յանը երբեք չի եղել էպիգոն՝ ինքնուրույն ստեղծագործությունից զուրկ սոսկա-  
կան մի հետևորդ: Իր երիտասարդական լիակ հասակից սկսած նա եղել և մինչև  
իր կյանքի վախճանը մնացել է մարտնչող, նոր ուղիներ հարթող, նորարար գիտ-  
նական: Սայթաբումներ, հարկավ, նա էլ է ունեցել, բայց այդ ո՞ր մեծ գիտ-  
նականն է, որ՝ անսխալ, անսայթաբ անցնելով գիտության ծովը, մեթոդոլո-  
գիայի բոլոր խոշորագույններն ու խոշորագույնները, «անվտանգ ու անշեղ», ուղիղ  
իր անքույթ հանգրվանն է հասել: Բայց կարևորն այստեղ նրա մանր-մունր սայ-  
թաբումները չեն, այլ նրա վիթխարի ներդրումը մեր գիտության ու մշակույթի  
բնագավառում: Նրա յուրաքանչյուր գիտահետազոտական աշխատությունը չի  
կարող անտեսել իսկական գիտնականը, եթե չի տառապում հավակնոտությամբ,  
կամ, պարզ ասած, համբակի մեկը չէ: Նրա հիմնական բանասիրական աշխա-  
տությունները հաստատուն սյուներ են մեր դարավոր մշակույթի հոյակապ  
շենքում:

Բնշո՞վ բացատրել այն, որ կես դար և ավելի առաջ հրապարակված նրա  
գիտահետազոտական աշխատությունները այսօր էլ առատ նյութ են տալիս մեր  
արդի գիտությանը և մեր գիտնականների համար «կաթնաղբյուրի» գերն են  
կատարում: Դրա միակ պատճառը կամ բացատրությունը այն է, որ մեծ գիտ-  
նականը՝ բնությունից օժտված լինելով նուրբ զգացողությամբ, գիտողական  
սուր ընդունակությամբ և արտակարգ քանասիրությամբ, հետազայում՝ ուսում-  
նառության շրջանում թե՛ Դևորգյան ճեմարանում և թե՛ եվրոպական համալ-  
սարաններում կարողացել է գիտություն ամբարել, քննադատաբար յուրաց-  
նել, ստեղծագործաբար մշակել եվրոպական առաջավոր գիտությունը և այդ  
ամենն ի սպաս դնել հայրենի աշխարհի հոգևոր մշակույթի ուսումնասիրու-  
թյան գործին: Եվ այդ երիտասարդական իղձը նա փայլուն կերպով կենսագոր-  
ծել է՝ շնայած ծանր աշխատանքային պայմաններին, անասելի ծանրաբեռնվա-  
ծությամբ մինչև 20-ական թթ.: Սովետական կարգերի հաստատումով նա վերջ-  
նականապես ազատագրվեց դպրոցական հիմնարկություններում ամենայն օր  
մի քանի տասնյակ աշակերտական շարադրություններ ուղղելու դժվարին աշ-

խատանքից. և ազատ ժամանակը լրիվ տրամադրեց զիտահետադոտական աշխատանքին,— ինչպես հաճախ կրկնում էր նա:

Մանուկ Արեղյանը ծնվել է Հին-Նախիջևանի Աստապատ (նախ. Թաղա-րենդ) գյուղում 1865 թ. մարտի 17-ին (հ. տ. մարտի 5-ին) անդրադետ հողագործ հաշատուր Արեղյանի ընտանիքում: Դպրական խալֆաների մոտ տերթոդիկյան «մանկավարժությամբ» զրաճանաչ դառնալով, նա միառժամանակ մնում է Կարմիր վանքի դպրոցում, ապա բարեկամների միջնորդությամբ 13-ամյա պատանյակը 1876 թ. ընդունվում է էջմիածնի նորաբաղ Գևորգյան ճեմարանը: Այստեղ նա աշակերտում է հայտնի մանկավարժ-դիտնականներ Ստ. Պալասանյանին, Կ. Կոստանյանին, Ս. Մանդինյանին, Փ. Վարդանյանին, 1885 թ. «հույժ գովելի» զնահատականով ավարտում է ճեմարանի լրիվ դասընթացը և նշանակվում ճեմարանի դպրանոցում հայոց լեզվի դասատու և զրադարանապետ: Երկու տարի ճեմարանում աշխատելուց հետո 22 տարեկան Արեղյանը փոխադրվում է Շուշի՝ Ղարաբաղի թեմական դպրոցում դասավանդելու, այստեղից էլ Թիֆլիս և այսպես շարունակ մի քաղաքից մյուսն է հրավիրվում, մի դպրոցից մյուսը, որպես հայկական միջնակարգ դպրոցների հայոց լեզվի և զրականության դասատու:

Էջմիածնում, Շուշում և Թիֆլիսում նա զբաղվում է զրական-զիտական-հասարակական-հրապարակախոսական զործունեությամբ, հրատարակում է իր «Նմուշներ» խորագրով բանաստեղծությունների ժողովածուն (1888), թարգմանում է Գողթի «Տարաբուրան», Լ. Տոլստոյից մի քանի պատմվածք և այլն: Ապա լույս է ընծայում, Գ. Սրվանձտյանցի հետևողությամբ, «Դավիթ և Մհեր» ժողովրդական վեպի մոկաց պատումը, որ զրի էր առել 1886 թ. էջմիածնում Գևորգյան ճեմարանի զննպան Նախո Բեռուց (1889), կապ է հաստատում «Նոր Դար»-ի խմբագրության հետ, որտեղ տպագրում է մի շարք զրաքննադատական և հասարակական հողվածներ «Վարսամ» և «Գիսավոր» կեղծանուններով, ապա 1889—90 թթ. «Մուրճ»-ի էջերում լույս է ընծայում իր անզրանիկ զիտահետադոտական աշխատանքը մեր ժողովրդական վեպին նվիրած՝ «Ազգային վեպ» խորագրով, որի մեջ ուրվաղծված են այն հիմնական զրույթները, որոնք նա ամրակուտ հիմնավորել է իր «Հայ ժողովրդական վեպը», ապա «Հայ վիպական բանահյուսություն» ստվար աշխատությունում:

1893 թ. բախտորոշ տարի էր Մ. Արեղյանի համար: Հասարակական զործիչների և զրականագետների միջնորդությամբ Մ. Արեղյանը, Կոմիտասը և մի շարք խոստումնալից երիտասարդներ ապահովվում են թոշակներով և մեկնում Գերմանիա բարձրագույն կրթություն ստանալու: Մ. Արեղյանն ընդունվում է Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը, ապա փոխադրվում է Լայպցիգ, Ննա, այնտեղից Փարիզ, որտեղ մի տարի իբրև ազատ ունկնդիր լսում է ընդհանուր զրականության պատմություն և տեսություն, նորից վերադառնում է Ննա, որտեղ՝ 1898 թ. ներկայացնելով «Der armenische Volksglaube» խորագրով իր զիտերտացիան և արժանանալով փիլ. զոկտորի աստիճանին, վերադառնում է հայրենիք: Այստեղ նրան հրավիրում են Գևորգյան ճեմարանի դասախոս: Ընթացում ավանդում է մի շարք հայազիտական աշխարհաներ՝ հայոց լեզու և զրականություն, հայ ժողովրդական բանահյուսություն, հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, առանձնապես պատմական աշխարհագրություն, ընդհանուր զրականության տեսություն, զերմաներեն և այլն:

Չնայած այդ ծանրաբեռնվածությանը, ճեմարանի դասախոս Մ. Աբեղյանը մինչև 1914 թ., իր պաշտոնավարության վերջին տարին Գևորգյան ճեմարանում, կարողանում է էջմիածնում և այլուր լույս ընծայել 12 կարևոր հետադոտություններ («Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» (1899), «Հայ ժողովրդական վեպը» (1906—8), «Շարականների մասին» (1912), Մովսես Խորենացու Հայոց պատմության քննական-բաղդատական հրատարակությունը (Ս. Հարությունյանի հետ, 1913) և մի շարք լեզվաբանական մենագրություններ ու գրաքննադատություններ)։

1914 թ. ընդհարվելով ճեմարանի վարչության հետ՝ նա փոխադրվում է Թիֆլիս, որտեղ պաշտոնավարում է որպես հայոց լեզվի և գրականության դասախոս Ներսիսյան դպրոցում և իգական հայկական միջնակարգ դպրոցներում մինչև 1919 թ., երբ նա տեղափոխվում է Երևան։

Թիֆլիսյան այս երկրորդ շրջանը բնորոշ է Մ. Աբեղյանի գրական-գիտական գործունեության համար այն տեսակետից, որ նրա գիտահետազոտական աշխատանքը գերազանցապես առնչվում է հայ բանաստեղծության ուսումնասիրության հետ։ Նա մանրակրկիտ ու խորագնին հետազոտում է Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատենան»-ը և «Տաղեր»-ը։

Մ. Աբեղյանի պաշտոնավարությունը միջնակարգ դպրոցներում մինչև պետհամալսարան հրավիրվելը տևում է մոտ 30 տարի։

1921 թ. հունվարին Մ. Աբեղյանը հրավիրվում է նորաբաց ժողհամալսարանի դասախոս, վերակառուցումից հետո նա դասախոսում է պետհամալսարանում, 1926 թ. հաստատվում է պրոֆեսորի պաշտոնում, 1935 թ. արժանանում գիտության վաստակավոր գործչի կոչման և *honoris causa* բանասիրության դոկտորի աստիճանին, իսկ 1943 թ. մտնում է գիտությունների ակադեմիայի անդամի կազմի մեջ իբրև իսկական անդամ-ակադեմիկոս։ 1926—1930 թթ. գլխավորում է Գիտության և արվեստի ինստիտուտի գիտական կոլեգիան որպես նախագահ։

Սովետական կարգերի հենց առաջին օրերից կառավարության հրավերով Մ. Աբեղյանը մեծ եռանդով ու ոգևորությամբ մասնակցում է ռազմական, իրավաբանական և բժշկագիտական հայերեն գիտական տերմինաբանություն կազմելու աշխատանքներին, իբրև միակ Նեղինակավոր հայկաբանը այդ մարմինների մեջ։ Այդ նույն ժամանակաշրջանում նա լուսծովկոմի հանձնարարությամբ կազմում է հայոց լեզվի ուղղագրության բարեփոխման նախագիծը, որ և հաստատվում է ժողկոմխորհի կողմից և գործում է մինչև 1940 թ., երբ հաստատվում է նոր, այժմ գործող ուղղագրությունը, որ փաստորեն 1921 թ. ժողկոմխորհին ներկայացրած Ուղղագրական ռեֆորմի առաջին նախագիծն էր, և Աբեղյանն էլ առաջին հերթին այդ նախագիծն էր ուղղում կենսագործած տեսնել, սակայն ժողկոմխորհը հաստատեց երկրորդ նախագիծը։

1930-ական թթ. սկսած պրոֆ. Մ. Աբեղյանը լույս է ընծայում մի շարք դարակազմիկ աշխատություններ, որոնցից հիշենք՝ «Հայոց լեզվի տեսություն» (1931), «Հին գուսանական ժողովրդական երգեր» (1931), «Հայոց լեզվի տառադարանություն» (1933), «Գուսանական ժողովրդական տաղեր», «Ժողովրդական խաղիկներ» (ընդարձակ ներածականներով), ասյա Կորյունի «Վարք Մաշտոցի» գիտական-քննական բնագիրը՝ աշխարհաբար թարգմանությամբ (1940), «Սասնա ծռեր» հայ ժողովրդական վեպ (երկու հատոր, երեք գիրք) աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի (1936, 1944, 1951), ասյա մասնական առաջ



դրած և զժրախտարար իր ավարտին չհասցրած «Հայոց հին գրականության պատմություն»-ը (I դիրք, 1944, II դիրք, 1946)։

1944 թ. սեպտեմբերի 25-ին ակադ. Մ. Արեղյանը կնքեց իր բեղմնավոր, բազմավաստակ կյանքի մահկանացուն։

Ականավոր գիտնականի կյանքի ու գործի այս թուղթիկ հիշատակությունն անգամ ակներախ ցույց է տալիս այն վիթխարի գիտական-գրական ժառանգությունը, որ նա իրրև անգնահատելի ավանդ կտակել է հայ մշակույթին, հարազատ հայագիտությանը։ Եվ կարող են հայ գիտնականները՝ ահել թե չահել, դրադվել հայ լեզվի, հայ գրականության, մասնավորապես հայ հին գրականության, բանագիտության, ժողովրդական բանահյուսության, լեզվաշինարարության խնդիրներով և մի քայլ առաջ տանել, զարգացնել այդ առարկաները, եթե նրանք խորամուխ չլինեն նրա գիտական վաստակի մեջ, չօգտագործեն տասնյակ տարիների ընթացքում նրա կողմից ի մի հավաքած նյութերը, դրանց խորաթափանց հետազոտությամբ կատարած հզորահանգումները, մի խոսքով՝ չկրժեն «գիտության այդ գրանիտը»։ Մենք համոզված ենք, որ իր մասնագիտական բնագավառում գիտական աշխատավորներից հաջողություն կունենա միայն նա, ով ազնվաբաբ կուսումնասիրի Արեղյանի ավանդը, կյուրացնի աբեղյանական փուլը և, առաջնորդ ունենալով մարքս-լենինյան մեթոդոլոգիան՝ կքայլի դեպի նոր գիտական խիզախումներ, նոր հայտնագործումներ։

Մեծ գիտնական Մ. Արեղյանի փոքր-ինչ առաջ թվարկածս ամենակարևոր աշխատությունները բազմազան են ու բազմաժանր, սակայն դրանք իրենց բազմազանության մեջ ապշեցուցիչ միասնական են. բոլորն էլ նվիրված են հայոց լեզվին, հայոց հաղարամյա բանահյուսությանը՝ վիպասանքից սկսած դեպի միջնադարյան դուստնական երգերն ու տաղերը, այնտեղից էլ մեր վերջին շրջանի թուփուն ժողովրդական խաղիկները, հայ առասպելներից մինչև մեր շնաշխարհիկ «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը, հայ, գերազանցապես, «գեղարվեստական գրականությունը»՝ սկսած «Ճանաչել գիմաստութիւն և դիւրատ, իմանալ գրանս հանճարոյ» իմաստուն պատվիրանից, Մաշտոցի մերմունջներից մինչև XVIII դ. վերջերը — Սայաթ-Նովան ու իր խաղերը, և վերջապես իր տեսակի մեջ բացառիկ արժեքավոր «Հայոց լեզվի տաղաչափությունը» հետց մինչև Եղիշե Զարեհյու Սրանք են Մ. Արեղյանի գիտահետազոտական հետաքրքրությունների սահմանները։ Այս դասակարգման մեջ յուրաքանչյուր փունջը կամ խումբն իր հերթին բաժանվում է երկու մասի՝ ա. նյութի զիտական-բնական հրատարակություն և բ. ուսումնասիրություն, օրինակ՝ բանահյուսության գծով՝ ա. բնագիր — «Սասնա ծռեր»-ի գիտական հրատարակություն, «Գուսանական տաղեր», «Ժողովրդական խաղիկներ» և այլն, բ. ուսումնասիրություն. կամ հիս գրականության դժով՝ Մովսես Խորենացու Հայոց պատմության և Կորյունի «Վարք Մաշտոցի» բեադրերի քննական հրատարակություն, ապա ուսումնասիրությունը և այլն։

Պարզ է, որ այդ ամենը հնարավոր չէ մի փոքր հոգվածում, թեկուզ շատ թուղթիկ, բնութագրել, ուստի կարծում ենք, որ ավելի նպատակահարմար կլինի այդ վիթխարի ժառանգությունը բաժանել մի երկու-երեք փնջի, ապա բնութագրել յուրաքանչյուրն առանձին՝ որոշել նրանց տեղը հայագիտության մեջ։

Այդ թեմատիկ փնջերն են՝ ա. բանահյուսություն — բանագիտություն, բ. գրականություն — գրականության պատմություն։

Դասակարգածս գիտահետազոտական թեմատիկ փնջերի մեջ Մ. Աբեղյանը կոնկրետից է ելնում դեպի ընդհանուրը, իսկ ընդհանրացման համար, ինչպես հայտնի է, անհրաժեշտ է հարուստ նյութ ունենալ: Ահա այստեղ է, որ նա անդադրում աշխատանքով, համառ պրպտումներով հայոց լեզվից, գրականությունից ու բանահյուսությունից հարուստ փաստական նյութեր է քաղում-ամբարում, ապա մատերիալիստական մեթոդոլոգիայի դիրքերից խորամուխ լինում նյութի մեջ և մանրակրկիտ հետազոտությամբ քննարկում երևալույթներն ու իրողությունները, գրական ու լեզվական օրինաչափությունները, մարտնչող պոլեմիստի անդիջողականությամբ և սկզբունքայնությամբ պայքարում հակառակորդների դեմ և հերքում սխալն ու կասկածելին, ապա երկաթյա տրամաբանությամբ ծանրակշիռ փաստարկումներով կոռուցում իր սեփական տեսությունը՝ բարձրացնելով գիտության տվյալ բնագավառը մի նոր աստիճանի: Նրա պոլեմիստական այդ հատկությունները հանրածանոթ են:

Դիմենք այժմ նշածս թեմատիկ փնջերից թեկուզ բանահյուսության-բանագիտության, որ նաև ժամանակագրորեն նրա ստեղծագործական սկզբնական փուլն է հանդիսանում:

Մինչև XIX դարի կեսը հայ բանահյուսությունը մի անհայտ բնագավառ էր հայագիտության մեջ: 1850 թ. սկսած եվրոպական և ռուս բանագիտության ազդեցությամբ հայ գիտական հասարակայնությունը որոշ ուշադրություն էլ նվիրում նաև «բանահյուսության» 1850 թ. հայտնի հայկաբան Մկրտիչ էմինը լույս է ընծայում իր «Էլիպը հնոյն Հայաստանի» այդ դարաշրջանի համար խիստ արժեքավոր ուսումնասիրությունը: Մ. էմինին հետևում են Հ. Գաթրո-ճյանը (1851), Ղ. Ալիշանը («Ռամկական երգը հայոց», 1852), Ստ. Պալասանյանը («Հայոց գրականության պատմություն», հատ. Ա., «Բանավոր գրականություն», 1865), նորից հանդես է դալիս Մ. էմինը («Монсей Хоренский и древнеармянский эпос», 1881, որը Գր. Խալաթյանցը թարգմանում է հայերեն, 1886) և այլն: Ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում էր Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ պահպանված հայ հին բանահյուսության բեկորիկներին: Այնուամենայնիվ՝ շնայած հետազոտությունների այդ մատենաշարին, թե՛ օտար և թե՛ ինչ հասարակության մեջ տիրապետում էր այն կարծիքը, որ հայր չունի արվեստ, չունի ժողովրդական երգ-երաժշտություն<sup>1</sup>: Անցյալ դարի 90-ական թթ. սկզբին այդ հոսանքը գլխավորում է Գր. Խալաթյանցը, որը լույս է ընծայում իր «Армянский эпос в Истории Армении Монсея Хоренского» մագիստրոսական դիսերտացիան (1893): Տարվելով հակախորենացիական հոսանքով, Գր. Խալաթյանցը բանասիրական սխալ եղանակներով ժխտում է անգամ գուսանական երգերի, վիպասանքի և զրույցների վաղերականությունը Մ. Խորենացու պատմության մեջ՝ համարելով դրանք բիր-լիական գրքերի և այլ գրական աղբյուրների ոճային ազդեցությամբ հորինված նենգափոխություններ: Եվ այս ամենը մի դարաշրջանում, երբ հրապարակի վրա էին Գ. Սրվանձտյանցի «Գրոց ու բրոցը և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (1874), «Մանանա» (1876), «Համով-հոտով» (1884) հարուստ ժողովածուները, Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթները», «Հայ ժողովրդական ավանդությունները» (1882—1883), Շերենցի «Վանա սազը»

<sup>1</sup> Այդ կարծիքին է եղել անգամ հայ ծայրագույն վարդապետ, Մ. Խորենացու Պատմության աշխարհարար թարգմանիչ Խորեն Ստեփանեն (1889): Տե՛ս «Մի էջ կոմիտասի ժառանգությունից», «Սովետական արվեստ», 1965, N 4, էջ 34—35:

(1885), Մ. Արեղյանի, Գ. Հովսեփյանի «Սասնա ծռեր»-ի պատումները, և վերջապես հենց իր՝ Գր. Խալաթյանցի կազմած «Մրադիր հայ ազգագրության» (1887) և ուսերեն թարգմանած, ծանոթագրած և նախնական քննության ենթարկած Սասունցի Դավթի՝ Սրվանձտյանցի պատումը (1887)։

Մ. Արեղյանն իր զրական-գիտական հենց առաջին տարիներից սկսած պայքարի է ելնում այդ կեղծ բանասիրական, պատմահասարակական առումով նիհիլիստական գիտական մեթոդի դեմ։ Նրա գիտական բանահավաքական անդրանիկ աշխատության («Դավթի և Մհեր» մոկաց Բարբառով, 1886 թ., հրապարակված 1889 թ.) ուշադիր ընթերցողը կնկատի, որ մեր երիտասարդ գիտնականը հակադրվում է Մ. էմին-Գր. Խալաթյանց տեսությանը։ Այդ հակադրությունը տարիներ շարունակ աննկատ մնաց, մինչև որ նա մի տասնամյակ անց գիտական հարուստ պատրաստությամբ դիմված կրկին հանդես եկավ հայ ժողովրդական առասպելի պատմական գոյությունը ժխտող և Պատմահորը կեղծարար ներկայացնող Հաղարյան ճեմարանի պրոֆ. Գրիգոր Խալաթյանցի անընդունելի տեսության դեմ, այս անգամ արդեն հակառակորդին վերջնականապես տապալելու, նրա կեղծ տեսությունը հիմնովին ջրելու համար։ Նա 1898—1899 թթ. «Արարատ» ամսագրում, ապա առանձին գրքով լույս է բնծալում իր տեսակի մեջ եզակի, պոլեմիստական կայծկլտող տաղանդի արդասիր «Հայ ժողովրդական առասպելները Մովսես Խորենացու Հայոց պատմության մեջ» ծանրակշիռ ուսումնասիրությունը (1899)։ Այստեղ Մ. Արեղյանը նախ և առաջ մանրամասն քննության է առնում Խորենացու Պատմության մեջ եղած բանահյուսական տերմիններն ու բառակապակցությունները, պարզում է նրանց իմաստն ու բովանդակությունը, բաղդատում նույնանման տերմինների հետ այլ ժողովուրդների բանահյուսության մեջ, ապա այդ հաստատուն գիրքերից գրոհում «հակառակորդի» վրա։ Անդիմադրելի փաստարկներով նա, որպես արտաքին խաբուսիկ տպավորությունների արգասիք, դեն է նետում Գր. Խալաթյանցի կարծեցյալ փոխառությունները բիրյիական բառապաշարից և արտահայտություններից, ըստ այնմ էլ մերժում է դրանց հիման վրա կառուարած եզրահանգումները, ապա մանրամասն հետազոտում Խորենացու օգտագործած կամ տեղ-տեղ բառացի վկայակոչած Վահագնի (96—175), Հայկի (176—258), Տորք Անդեղի (259—283), Տիգրանի (379—510), Շամիրամի (511—549) առասպելները և վերջապես վիպասանքի պատմականն ու կենցաղայինը (284—379)։ Պատմա-համեմատական եղանակով հաստատելով իր քննությունը, Մ. Արեղյանը մերժում է Խալաթյանցի տեսությունը «կեղծության» և «փոխառության» մասին և հանգում հետևյալ եզրակացության. «Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ հիշված առասպելները ոչ թե կեղծիք են և շինծու, այլ իրոք գոյություն են ունեցել հայոց մեջ, Խորենացին կամ ինքն անձամբ, կամ յուր աղբյուրների միջոցով օգտվել է հայ ժողովրդական առասպելներից» (էջ 594)։ «Խորենացու մեջ եղած հայ ժողովրդական առասպելները «ազգային երգեր» չեն միշտ, այլ հաճախ սոսկ պատմվածքներ և զրույցներ» (էջ 595)։ Ըստ Մ. Արեղյանի «Հայկի ու Բելի, Արա Գեղեցկի և Շամիրամի, Անդեղ Տորքի, Վահագնի պատմությունները զիցաբանական կամ դյուցազնական առասպելներ են և են՝ շատ շնչին պատմական գույն ստացած... Պատմական եխողություններն սկսվում են Արտաշատի հիմնադրությունից (180 թ. Ք. ա.), հայոց բնիկ, հարադատ և առաջին թագավորության հիմնադիր Արտաշեսից (Ա)։ Այնուհետև ժողովուրդը երգել և պատմել է նորա մերձավոր հաջորդ ու զավակ Մեծ Տիգրա-



նի... սորա ուղի Արտավազդի և թոռան Արտաշեսի (Բ.) պատմությունները և այս երեքի հարաբերությունը Մարաց հետ... Վերջին պատմական հիշողությունն է Տրդատ Ա-ի ժամանակ Ալանաց արշավանքը (72 թ. Ք. հ.): Ուրեմն,— եզրակացնում է նա,— ընդամենն 252 տարվա պատմությունն է նյութ դարձել ժողովրդական երգերի և զրույցների» (էջ 595—596)։

Այդ հետաքրքրական հետազոտությունը կատարելուց հետո Մ. Աբեղյանը բացատրում է նաև, թե ինչպես պատմականն ու առասպելականը միախառնվել են մեր այդ «առասպելներին» մեջ։ «Տիգրանի և Արտաշեսի շրջանները... ձգտել են միանալու, կենտրոն «ունենալով Մարաց, որ է վիշապազանց հետունեցած հարաբերությունը թե՛ ըստ պատմականին և թե՛ ըստ առասպելականին» (էջ 598)։

Հուժկու էր Մ. Աբեղյանի հարվածը, անառարկելի նրա փաստարկները. Գր. Խալաթյանցը չփորձեց անդամ պատասխանել։

Անշափ մեծ է Մ. Աբեղյանի այս փայլուն պոլեմիկական, միաժամանակ խոր դիտական հետազոտության արժեքը հայ բանասիրության և բանագիտության համար։ Մի կողմից, դա կեղծ բանասիրության ու առաջին հայացքից հեշտ րենկավոդ փոխառական սիստեմների ջախջախումն էր, մյուս կողմից, հավաստում էր հայ ժողովրդական բանահյուսությունը հազարամյակներ առաջ, հետևաբար հաստատում էր նաև Մ. Խորենացու վկայակոչած բանահյուսական աղբյուրների դոյությունը, ինչպես և վերականգնում Պատմահոր հեղինակային վարկը, առավելապես տարբերազատում նրա վիպածի բանահյուսական և անձնական ստեղծագործականի շափն ու ձևը։

Մ. Աբեղյանի քննարկածս աշխատության հրապարակվելուց հետո՝ Մ. Խորենացու օղտագործած բանահյուսական աղբյուրները կասկածի չեն ենթարկվել և հատուկ բացասական ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել։

«Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» աշխատությունը կողմնակի պատասխան էր նաև այն նիհիլիստական մտածողության, որ XIX դարի երկրորդ կեսին ծայր էր առել ռուսական և հայկական որոշ շրջաններում։

Մ. Աբեղյանը դրանով չբավարարվեց։ Նա պայքարը պիտի շարունակեր մինչև վերջնական, կատարյալ հաղթանակը։ Եվ մենք տեսնում ենք, թե ինչպես նա երգի և երաժշտության հանձարեղ վարպետ Կոմիտասի հետ հավաքում, խմբագրում և լույս է ընծայում «Հազար ու մի խաղի» առաջին երկու հիսնյակները (1903—1904 և 1905 թթ.), ապա Մ. Աբեղյանը մի հատուկ ուսումնասիրություն է նվիրում ժողովրդական խաղերին («Ուսվածք», 1905)։ Սրանից հետո կարծես նրանց աշխատանքի ասպարեզը փոքր-ինչ իրարից հեռանում է. Կոմիտասը շարունակում է ժողովրդական երգ-եղանակներ զրի առնել, իսկ Մ. Աբեղյանը գլխավորապես զբաղվում է ժողովրդական վեպի ուսումնասիրությամբ և հայոց լեզվի քերականությամբ, բայց երբեք չի մոռանում ժողովրդական տաղ ու խաղիկները և պատեհությամբ անդրադառնում է նրանց, մինչև որ շուրջ քառասուն տարի անց հրապարակ է հանում «Ժողովրդական խաղիկներ — գյուղական փոքր երգերն իրենց փոփոխակներով» և «Գուսանական-ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ» երկու ստվար հատորներն իրենց ներածականներով և ծանոթագրությամբ (1940)։

Գուսանական-ժողովրդական տաղերի ուսումնասիրությունը մեր բանահյուսության ամենահիմնական պրոբլեմներից էր։ Պետք է ասել, որ մինչև XX

դարի սկիզբը մեր բանասիրության մեջ այն տեսակետն էր իշխում, թե գուսանական երգ հասկացությամբ պետք է պատկերացնել այն փոքրիկ երգերը, որոնք հին Հայաստանում ստեղծում ու տարածում էին միայն Գողթան երգիչներն ու այլ գուսաններ։ Մ. Արեղյանն իր զարմանքի արժանի բանասիրական-բանահյուսական «Հին գուսանական-ժողովրդական երգեր» մենագրությամբ կուռ փաստարկումներով ապացուցեց, որ Տեկանցի ու Արշ. Չոպանյանի գրչով XVI դարում ապրող աշուղ Նահապետ Քուչակին վերագրվող «Հայրեններ» իսկապես անանուն և անհայտ գուսանների ու երգչուհիների հորինած «Հայոց հին աշխարհիկ քնարերգության մնացորդներն են», որոնք բանահյուսական-բանավոր եղանակներով ստեղծվել ու կենցաղավարել են ժողովրդական լայն միջավայրում, մասամբ էլ զրիչների միջոցով տեղ են գտել մեր ձևազիր մատյաններում։ Գիտնականի այդ կարևոր եզրահանգումը հիմնված է «Հայրեններ» ու մեր ժողովրդական խաղ ու տաղի, երգերի ձևի և բովանդակության մանրակրկիտ ուսումնասիրության վրա։ Այստեղ քննության են առնված «Հայրեններ» ու ժողովրդական երգերի մեջ արտացոլված ժողովրդական խավերի նիստն ու կացը, կենցաղն ու զբաղմունքը, համանման ստեղծագործական արտահայտչական միջոցները՝ պատկերները, համեմատություններն ու հակադրությունները, հավատալիքներն ու բարոյական հասկացությունները, վերջապես տաղերի ու երգերի համանման ոտանավորն ու տների հորինվածքը։

Հետևյալ կարևորագույն գիտահետազոտական պրոբլեմը, որին ի սպաս գրեց Մ. Արեղյանն իր տաղանդն ու անսպառ գիտությունը, հալվելու և վիսկական բանաստեղծությունն է, մանավանդ նրա վերջին հրաշալիք «Սասնա ծռեր» — «Սասունցի Դավիթ» ժողովրդական դյուցազնական վեպը։ Այստեղ էլ պրոբլեմի «երկունքից» մինչև ամբողջ աշխարհում ճանաչվելը, կույտուրական հանուր մարդկության անկապտելի սեփականություն դառնալը կես դարից ավելի տևել է։ «Սասնա ծռեր» ժողովրդական վեպը իր վեհ գաղափարներով, իր մարդասիրական-խաղաղասիրական հույզերով, նրբակերտ ու լուսակերտ կերպարներով, գունազեղ պատկերներով, համամարդկային իդեալներով կարողացավ առինքնել մեր երկրագունդը։ Գեղեցկության ու մարդասիրության այս հաղթանակն արշավի մեջ (միայն 1964 թ. երկու անգամ հրատարակվել է անգլերեն Հյուսիսային Ամերիկայում երկու տարբեր թարգմանությամբ, ապա ֆրանսերեն և լեհերեն) ի րիվս շատ վաստակավորների առժանի է փառապսակի առաջին ներքին մեծ մեծ բանավետ Մ. Արեղյանը։

Այստեղ մենք չենք կարող մանրամասն քննության առնել Մ. Արեղյանի այդ բնագավառին նվիրած յուրաքանչյուր հետազոտությունը։ Բավական է միայն նշել, որ դեռևս 1886—1889 թթ. («Դավիթ և Մհեր» մոկաց պատում) և 1889—1890 թթ. («Ազգային վեպ» ուսումնասիրություն) երկու պատումների համեմատ՝ ճիշտ բնութագրելով մեր «Սասնա ծռեր»-ի առաջացման վայրը, միջավայրը, ազգային բնույթը, պատմական-աշխարհագրական, հասարակական-տնտեսական և այլ պայմանները, որոնք պարարտ հող են հանդիսացել վեպի զարգացման համար, նա կարողացել է հիմնական զծերով ճշտել, որ մեր նոր վեպը իր հորինվածքով և կառուցվածքով նախնական չէ, որ նրա երկու ինքնուրույն ճյուղերը՝ «Սասնաբուն» ու Աղբամալի (Բաղդասարը)» և «Մհեր» տարբեր միջավայրի ծնունդ են, ուրույն զարգացման արդյունք և միայն հարակցման կարգով են միացել մեր վեպի առանցքը կազմող, նրա ողնաշարը հանդիսացող «Դավիթ պատմություն»։ Այս տեսակետը հրապարակվելուց



հետո շուրջ չորս տասնամյակ մեր բանահավաքները դրի են առել ևս հիսուն նոր պատումներ, որոնք րոտ մեծի մասի դրի են առնվել Վանա լճի ավազանում, ասյա Այաշկերտ-Բաղրեանդում, այստեղից էլ՝ Ասպարանում, նոր Բայազետի շրջաններում և Արարատյան դաշտում:

Մ. Աբեղյանի տեսակետը մեր վիպագիտության մասին նոր պատումների հրապարակման առնչությամբ նմանապես որոշ փոփոխության ենթարկվեց, բայց ոչ թե նախկին տեսակետի ժխտման զօրով, այլ, ընդհակառակն, ավելի խորացնելու, փաստերով ու փաստարկներով ավելի հիմնավորելու ուղղությամբ: 1906—1908 թթ. նա «Ազգագրական հանդես»-ում լույս է բնծայում իր «Հայ ժողովրդական վեպը», ասյա գրում է «Հայ վիպական բանահյուսություն» վերնագրով ստվար հատորը, որ մինչև օրս դժբախտաբար չի հրապարակվել և որի հրատարակությունն ամենաառաջնահերթ խնդիր է մեր բանագիտության համար: Այս աշխատության մեջ ի մի է բերված և վերամշակության ենթարկված այն ամենը, ինչ գիտնականը գրել էր հայ վիպական բանահյուսության մասին: Հատորը բովանդակում է առասպելների, վիպասանքի, «Պարսից պատերազմ»-ի, «Տարոնի սլատերազմ»-ի, էլ-Վակիդիի հաղորդած «Աղջիկ Տարոնի և Մուշի պատմություն» գրույցի, «Մուշիդի պատմություն» ու «Սասնա ծռեր» վեպերի և վիպական երգերի մանրամասն, հետևողական վերլուծությունը:

Վեպը միշտ ազգային բնույթ է կրում, կապված է որոշ աշխարհագրական միջավայրի և պատմական իրադարձությունների հետ. անդրապատկերում է վեպ ստեղծող ժողովրդի հասարակական-տնտեսական կյանքի արտացոլքը: Մտ այդ տվյալների վեպն առաջին հերթին կապվում է Սասունի, Տարոնի միջավայրի հետ: «Մեր ժողովրդական վեպն յուր մեջ պահում է պատմական հիշողություններ մեծ մասամբ IX դարու կեսից մինչև XIII դարը»: «Հաջորդ դարերը միայն անունների ու մասամբ դեպքերի փոփոխություններ են մտցրել վեպի էական կողմի մեջ», — գրում է նա:

Այս ժամանակաշրջանում է կատարվում Սասունի պատմության մեջ այն հղերական իրադարձությունը, որ կապված է զարհուրելի հարկահանության հետ և որը ցնցում է ամբողջ հայ երկիրը: Հաբսբուրգյան շախատանի հրսկան պատմության, ինչպես և վեպի առաջնգն է կազմում:

Մ. Աբեղյանի կատարած պատմա-աշխարհագրական պրպտումները ժողովրդական վեպի կապակցությամբ նրբին են, մանրակրկիտ և շատ արժեքավոր հարավային շախատանի պատմության և տեղագրության համար:

Ականավոր բանագետի գիտահետազոտական տեսադաշտում են գտնվում առասպելաստեղծ և վիպաշեն հայ ժողովրդի հազարամյակների ընթացքում կերտած հոգևոր կուլտուրայի վիպական հուշարձանների փոխհարաբերության և հարատևության պրորիմները: Նա իր ուսումնասիրությունների մեջ հատուկ ուշադրություն է դարձնում այն նշանակալից երևույթի վրա, որ վիպաշեն ժողովրդը անդարձ մոռացության չի տալիս իր ստեղծածը, այլ մշակելով այն՝ մի շրջանից մյուսն է փոխանցում, մի հուշարձանից՝ մյուսը: Հայկի ու Բելի, Վահագնի, Արա Գեղեցկի ու Շամիրամի, Տիգրանի ու Աժդահակի վիպասանքի, «Պարսից պատերազմ» ու «Տարոնի պատերազմ» վեպերի մոտիվները, կերպարները, անգամ հիմնական գաղափարները — պայքար բռնակալության դեմ — փոփոխվելով հազարամյակներ են անցնում և հասնում մեր «Սասնա

ծուր» ժողովրդական վեպին ու աննկատելի իրենց հարազատ տեղը դրավում նրա մեջ: Առանձնապես ակնհայտ է Մուշեղ սպարապետի կերպարը, որ IV դ. սկսած՝ դարեր շարունակ մի վեպից մյուսին է անցել և ազգակցական հարաբերություններով կապվելով Սասնա ծուրի հետ, իր վիպական կնիքը դրել Դավթի կերպարի վրա: Այս ամենը ցույց է տալիս, որ մեր նոր վեպը ոչ թե մի նոր բանահյուսական ստեղծագործություն է, որ կապ չունի անցյալում ժողովրդի կողմից ստեղծած հոգևոր հուշարձանների հետ, այլ նրա օրինաչափ զարգացումն է՝ հարմարեցրած նոր հասարակության կեցությանը և գիտակցությանը, այսինքն՝ «բնությանն ու հասարակական ձևերին, որոնք անգիտակցական եղանակով մշակված են արդեն ժողովրդի երևակայության միջոցով» (Կ. Մարքս):

Մեր «Սասնա ծուր» ժողովրդական վեպի հայտնաբերողի փառքն անվիճելիորեն պատկանում է Գար. Սրվանձտյանցին, սակայն նրա առաջին համակողմանի ուսումնասիրողը, նոր և հին վեպերի՝ «Սասնա ծուր»-ի ու վիպասանքի, «Պարսից պատերազմ»-ի, «Տարոնի պատերազմ»-ի և այլ վիպական ստեղծագործությունների, մի խոսքով՝ հայ վիպական բանահյուսության բազմակողմանի հետազոտողը, նրանց աստիճանական զարգացումը, մեկից մյուսին փոխանցումը ճշտողն ու հիմնավորողը նույնպես անվիճելիորեն Մ. Արեղյանն է: Նա է մեր բանագիտության, մասնավորապես վիպագիտության օրինական նիմնադիրը:

Մ. Արեղյանի աչքից չեն վրիպել նաև մեր վեպի ձևական կողմերը, վեպի հորինվածքը, գեղարվեստական արտահայտչական միջոցները և հատկապես ոտանավորի չափը: Վերջինս ճշատ մոտ է հին հեթանոսական վեպերի (իմա՝ վիպասանքի — Կ. Մ.-Ս.) չափին», ընդ որում «ոչ թե միայն ոտքը լսելի է ավելի պատմական ու նկարագրական հատվածների, ինչպես և երգերի մեջ», «ոչ թե միայն համեմատաբար պակաս է կարճ խոսակցությունների մեջ» («Դավթի և Մհեր», Շուշի, 1889):

«Սասնա ծուր»-ի բանաստեղծական չափի իր սքանչելի հայտնագործումով Մ. Արեղյանն աներկրա հավաստում է մեր ժողովրդական վեպի ձևական կապը ավանդական հաջորդականությամբ նաև հին վեպի, վիպական երգերի, վիպասանքի հետ:

«Սասնա ծուր» ժողովրդական վեպի ոտանավորի մասին այս նախնական տեսակետը Մ. Արեղյանը տարիների ընթացքում էլ ավելի է մանրամասնել, հղել և ձևակերպել որպես տաղաչափական տեսություն իր «Հայոց լեզվի տաղաչափություն» մեծարժեք աշխատության մեջ: «Սասնա ծուր»-ի ոտանավորը մեծ մասամբ «յամբական պարզոտնյա ազատ ոտանավոր (է) անապևստի խառնուրդով և անապևստյան ազատ ոտանավոր յամբի խառնուրդով... Հաճախ դրանց հետ միանում են և մաքուր յամբական ու մաքուր անապևստյան տողեր, և երբեմն նույնիսկ յամբական տողեր ազատ ոտքերի (ազատ տակտերի) խառնուրդով, այլ և պատահում են տողեր, որոնց մեջ յամբերն ու անապևստները հավասարաթիվ են... Այսպիսի գործածությամբ այդ ազատ ոտանավորներն իսկապես խառն ոտանավորներ են միայն ոչ թե անդամներով հորինված, այլ պարզ ոտքերով»<sup>3</sup>:

<sup>3</sup> Մ. Արեղյան, Հայոց լեզվի տաղաչափություն, Երևան, 1933, էջ 360—370, «Դավթի և Մհեր» (առաջաբան), «Սասնա ծուր»-ի I հատ., էջ 4—6, նույն տեղում, Ներածություն, էջ 11—12:

Այժմ փոքր-ինչ անդրադառնանք նաև մեր ականավոր դիտնականի գրական-գրականադիտական և գրական-պատմագրական աշխատությունների բնութագրմանը: Այստեղ <sup>1</sup>լ նրա ստեղծագործական տաղանդը դրսևորվել է մի քանի ուղղությամբ: Նա 1889-ից մինչև 1900-ական թթ. գրել է բազմաթիվ մատենախոսություններ մի քանի տասնյակ հայ հեղինակների ինքնուրույն և թարգմանական գործերի մասին, 1895—1897 թթ. ընդարձակ հոդվածաշար է նվիրել եվրոպական «գրական դպրոցներին», վերլուծության ենթարկելով ա. եվրոպական Վերածնությունը, հումանիզմը և վերանորոգությունը, բ. սքոլաստիկան, գ. ֆրանսիական կլասիցիզմը և դ. ոռմանտիզմը:

1908—1909 թթ. սկսած «Արարատ» հանդեսում լույս են տեսնում նրա պատմագրական աշխատությունները՝ «Ուրվագծեր XIX դարի հայոց գրականության պատմությունից», 1912 թ. Հովհաննես Հովհաննիսյանի ստեղծագործության մասին, ապա փոխում է իր գիտահետազոտական քննությունների առարկան և զբաղվում գերազանցապես հին գրականության պատմության հարցերի ուսումնասիրությամբ: Մեկը մյուսի ետևից լույս են տեսնում նրա մենագրությունները, որոնցից յուրաքանչյուրը նվիրված է մեր հին գրականության պատմության այս կամ այն փուլի վերլուծությանը և հանդիսանում է առաջիկայում գրելիք «Հայոց հին գրականության պատմության» կարևորագույն գլուխներից մեկը: Այդ նախապատրաստական աշխատություններից են նրա հետևյալ երկերը՝ «Շարականների մասին», «Գրիգոր Նարեկացին», «Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության», «Վերածնությունը հայոց հին գրականության մեջ», «Կյանքի և աշխարհահայեցողության փոփոխությունը X դարի վերջերում և XI դարի սկզբներում իբրև հիմք հայոց գրականության վերածնության շրջանի», «Հովհաննես Սարկավազ վարդապետ» և այլ աշխատություններ: Այս աշխատությունների խորագրերը պարզ հուշում են, թե ինչ նպատակներ է հետապնդում նրանց հեղինակը, ինչ տեսագծով է լուսաբանում թվարկածս թեմաները և ինչ նախապատրաստական աշխատանք պիտի անհրաժեշտորեն կատարվի, որպեսզի հնարավոր լինի շարադրել «Հայոց հին գրականության պատմություն»-ը: Նախապատրաստական աշխատությունների մեջ առանձնապես կարևոր են երկուսը՝ «Գրիգոր Նարեկացի» մենագրությունը, որ իր տեսակի մեջ մի կատարյալ գիտահետազոտական գլուխգործոց է, և «Հայոց միջնադարյան աստվածներ և սոցիալական հարաբերությունները և անցմանը»: Գրիգոր Նարեկացու «Ողբերգութեան մատեան»-ի և «Տաղեր»-ի մանրակրկիտ և խորաքննի հետազոտությամբ նա գալիս է այն եզրակացության, որ հանձարեղ բանաստեղծը «հակառակ ճգնավորական մոայլ ոգուն», աշխարհամերժ քարոզիկ, բանաստեղծության նյութ է դարձրել իրական կյանքն ու բնությունը, կինն ու սերը, թեև այդ սերը դեռևս չունի ոչինչ նյութական, ֆիզիկական, կինը Աստվածածինն է: «Տաղեր»-ի մեջ երփնեբանգ, կենդանի, բնությունից քաղած վառ պատկերներով արդեն լիարյուն և անխաղախ զգացվում է վերածնության շունչը հայ գրականության, պոեզիայի մեջ:

Ոչ նվազ արժեքավոր է Աբեղյանի երկրորդ աշխատությունը: Այստեղ նա քննության է առնում X—XIV դարերի հայ հասարակության զանազան շերտերի սոցիալ-տնտեսական հարաբերությունները, սուր դասակարգային հակամարտության հիմնական պատճառները, սրանց արձագանքներն ու արտացոլքը առականների մեջ, ապա համակողմանի գնահատության ենթարկում վերջիններիս պատմագրական և գեղարվեստական արժեքը: Սրանք Մ. Աբեղյանի «Հայոց



հին գրականության պատմության» կառուցքային շարվածքի պատրաստի տա-  
շած-հղկած վեմ թարերն են:

Մ. Արեղյանը պարզ գիտակցում ու պատկերացնում էր հայոց գրականու-  
թյան պատմությունը գրելու դժվարությունները: Հայագիտության մեջ դեռևս  
բացակայում կամ ոչ ցանկալի ամբողջականությամբ էին ներկայացված ան-  
հրաժեշտ նախադրյալները՝ երկու տեսակ քննադատություններ — գրական և  
բանասիրական, որոնցից առաջինը համարյա լրիվ բացակայում էր, իսկ երկ-  
րորդը՝ բանասիրականը, չունեի պահանջվող լրիվությունը: Պետք է նախապես  
որոշված լինեն «բանասիրական խնդիրները, ինչպես են՝ տվյալ հեղինակի  
սպարած ժամանակը, նրա երկերը, կենսագրությունը, նրա ստեղծագործության  
հանգամանքները», — արդարացի նշում է նա: Իսկ այդ պահանջում է մի քանի  
հիմնարկությունների գիտական աշխատակիցներից երկարատև ժրջան հե-  
տադոտություններ, բնագրաբանական քննություններ և գիտական-բաղդատա-  
կան, հարաբերաբար ստույգ բնագրեր:

Մ. Արեղյանն այս տեսագծով էլ երկարատև, ջանադիր, ուժասպառող աշ-  
խատանք է կատարել՝ պատրաստելով (Ս. Հարությունյանի հետ) Մովսես Խո-  
րենացու Հայոց պատմության գիտական-բաղդատական բնագիրը՝ հիմնված  
մոտ շորս տասնյակ ձեռագիր և տպագիր հրատարակությունների վրա: Հետա-  
գայում (1941) նա պատրաստում է նաև հայ գրականության սկզբնավորու-  
թյունը պատմող Կորյունի «Վարք Մաշտոցի» արժեքավոր հուշարձանի բաղ-  
դատական բնագիրը և աշխարհաբար թարգմանությունը: Այս երկու հրատա-  
րակությունները, մանավանդ Խորենացու Պատմության բնագրի պատրաստու-  
մը, Արեղյան-բնագրաբանի խոր հմտության փառահեղ առհավատչյան են:

Տասնյակ տարիներ նախապատրաստական աշխատանք կատարելուց հե-  
տո վերջապես նա հանձն է առնում՝ գրելու իր հին գրականության պատմու-  
թյունը: Անմիջապես այստեղ հարց է առաջանում, թե «ե՞նք զրված՝ ներքից ի՞նչ  
իբրև հատկակի գրական երկ՝ պետք է նույն դասին գրա-պատմական ուսում-  
նասիրության»: Այդ հարցադրումը բնական ու օրինաշարական է, որովհետև  
նախորդող բոլոր «հայ գրականության պատմությունների մեջ» (Սումայան,  
Կապելետտի, Նոյման, Ստ. Նազարյան, Դ. Զարրհանայան, անգամ որոշ չա-  
փով նաև Ա. Զամինյան) այդ հարցը երբևք զրված չի եղել: Դրանց հեղինակ-  
ներն իրենց աշխատությամբ բնթյուրկել են համարյա այն ամենը, ինչ հայ գրով  
զրոշմված է եղել, կամ եթե նախապատմության հարց է ծագել, ապա հետա-  
քրքրության կենտրոն են դարձրել պատմագրությունը, վարքաբանական-դա-  
վանաբանական գրքային ժառանգությունը անկախ այն հանգամանքից՝ տվյալ  
երկը գրական արժեք ներկայացնում է, թե ոչ:

Մ. Արեղյանը վերը զրված շնչտակի հարցին շատ հստակ ու հակիրճ պա-  
տասխան է տալիս՝ «անշուշտ զեղաբնական երկերը»: Բայց բանն այն է,  
որ նոր գրականության պատմության համար այդ պարզ շափանիշը չի կարող  
կիրառվել հին գրականության պատմության մեջ: Այստեղ «կրիտերիումն ան-  
հրաժեշտորեն տարբեր պիտի լինի», — գրում է նա, — քանի որ հին գրականու-  
թյան մեջ «բանաստեղծականն ու ոչ-բանաստեղծականը կազմում են մի շտաբ-  
բերակված միություն»: Հին գրականության պատմության մեջ են մտնում «երկ-  
րորդաբար» վարքաբանական հուշարձանները որպես «վիպական պատումներ  
իրենց առանձնահատուկ ձևով և նպատակով», «պերճախոսությունը, ճառերը,  
որոնք բոլորը կրոնական լուսանդակություն ունեն... հորինված են հոնտորա-

կան վսեմ արվեստով» ...Ճառախոսները թկիրառում էին զանազան հոնտորական ձևեր, պատկերավոր արտահայտություններով պերճ լեզու» ...Այդպես են նաև հայ պատմագիրներից շատերը: Տարանց զրվածքները երբեմն խառնուրդ են բանաստեղծականի և պրոզայի: միևնույն երկի մեջ զրական և արտադրական տարրերը զտնվում են փոխափոխ իրար կողքի»:

Հին հայ գրականության պատմությանն ստիպված պետք է շեղվի, դուրս դա իր առարկայի սահմաններից և թեակոխի գիտության այլ բնագավառներ... «անի որ հաճախ բացակայում են գրականության պատմությանն օժանդակող բանասիրական երկերը, վերջինս ինքն ստիպված պիտի լինի այդպիսի հետազոտություններ կատարելու: Այս տիպի հավելյալ աշխատանքները խիստ ծանրաբեղում են գրականագետին, շեղում նրան ծրագրած գրականագիտական մտահղացումից: Եվ Աբեղյանը ստիպված է այդպիսի գրական-հետախուզություններ-էքսկուրսներ կատարել, որոնց մի մասը լույս է բնծայում գրքերի հավելվածներում:

Այսպես, հին գրականության առարկան պարզելուց հետո նա բնդհույ մոտենում է գրականության պատմությանը: Սակայն ժողովրդի հասարակական-քաղաքական ու տնտեսական, ինչպես և հոգևոր կյանքը մեկընդմիջտ սահմանած, մի հունի մեջ ներփակված միասնական հոսանք չէ: Կյանքն ունի իր օրինաչափությունները և այդ օրինաչափություններն արտահայտություն են գտել նաև հասարակության հոգևոր աշխարհում: Ինչպես կյանքի օրինաչափություններն են շրջանացման (պճրիողիդացիայի) ենթարկվում, այդպես էլ մտավոր կյանքինը պետք է սահմանադրվի:

Մ. Աբեղյանն իր «Հին գրականության պատմություն»-ը շրջանցման է ենթարկում, սակայն ոչ այնպես, ինչպես հայ գրականության նախորդ պատմաբանները, ձևակազմելով՝ թրաժանելով անդիր (բանավոր) գրականությունը՝ և գրավոր դպրություն Օ. դարից ի վեր (այն էլ, ինչպես ոմանք, հատկանիշ բնդունելով զրվածքի լեզուն դար առ դար,— Կ. Մ.-Օ.), այլ ըստ բովանդակության՝ նայելով գրականության մեջ արտահայտված պատմական իրականությունները:

Հայոց հին գրականության առաջին շրջանը, ըստ Մ. Աբեղյանի, «նախնական առասպելա-պատմական բանահյուսություն» է, որը ծածկվում է հնագույն ժամանակներից և արտահայտություն է հայոց պատմական իրականության մինչև III դարը (մ. թ.)» ...«Ուսումնասիրությունը կատարված է նկատի ունենալով հայոց նախնական պատմությունն ու կրոնը, օտար ազդեցություններն ու միջազգային առասպելաբանությունը, ինչպես նաև արվեստն ու կերպարները»— պարզաբանում է նա:

Երկրորդ շրջանն է «Մալաթիայի գրականությունը» կամ, ինչպես ավելի լրիվ ձևակերպված է «Եկեղեցա-մալաթիական մալաթիական գրականություն»: Այս շրջանի գրականությունը կազմված է թե՛ ավանդական բանահյուսությունից («Պարսից պատերազմ», «Տարոնի պատերազմ») և թե՛ գրավոր երկերից, որոնք արտացոլում են հայկական իրականությունը III դարից մինչև XI դարը: Այս շրջանում ավելի արտահայտիչ է երևան գալիս աշխարհիկ և հոգևոր ավատականների շահերի պաշտպանությունը, բնդ որում տիրական է մի միտում՝ պայքար օտար բռնակալության դեմ:

Շրջանի վերջում քաղաքների և քաղաքային բնակչության տնտեսական զարգացման համընթաց բարգաւաճում են նաև ժողովրդի շահերը, սրանց հի-

ման վրա՝ աշխարհիկ մտածողությունը, հայրենասիրական ոգին: Այս միջավայրում հրապարակ եկած մի շարք երկերի մեջ արդեն զգացվում է հաջորդ շրջանի՝ «վերածնության գրականության» շունչը:

Երբուրդ շրջանը (Xl—XVII դդ.) «վերածնության գրականությունն» է, որը հետևանք է այն փոփոխության, որ տեղի է ունեցել հայ հասարակական կյանքում:

Ծիշտ է, դեռ շարունակվում են նախորդ շրջանի գրական տեսակները (պատմություն, վարքաբանություն, մեկնություն, ճառ, բարոգ, հոգևոր երգ և այլն), բայց արդեն նկատելի են գրական նոր թեմաներ, նոր տեսակներ, նոր լեզվով հորինած: Ողջ մի կուլտուրական գրական հոսանք, ինչպես և ուրիշ մտավոր երևույթներ մի՞ բանի տարում չի սկսվում և երևան գալիս որոշ գծա-գրված կերպով: Շնորհի սկիզբը հենց այդ հնի մեջ է, նույնիսկ նրա բարդա-պահության մեջ... Գրիգոր Նարեկացին իր էությունը պատկանում է նախորդ գրական շրջանին, բայց նրա երկերի մեջ արդեն... երևում են վերածնության սաղմերը»,— գրում է Մ. Արևիկյանը:

Սրանով մենք վերջացնում ենք Արևիկյանի գրականության պատմության շրջանցումը: Երկրորդ հատորում լրացումների կարգով հիշվում է նաև Չորրորդ շրջանը՝ Պարականության նորոգումը XvII—XIX դդ., բայց բանի որ դա չի անցել մեր գիտնականի վերջնական բնության բովից՝ մենք իրավունք չենք համարում այստեղ բնութագրման ենթարկել:

Հայ հին գրականության պատմության շրջանները սահմանագծելուց հետո Արևիկյանը գրականության նյութը բաժանում է ըստ գրական ժանրերի և տեսակների, ապա բնության առումով յուրաքանչյուրն առանձին: Առաջին շրջանը՝ նախնական առասպելական-պատմական բանահյուսությունը բաժանում է երկու ուրույն հատվածների՝ հին առասպելներ ու ավանդական վեպ, բնդ ուրում գրանք կապում է իրենց ստեղծող հասարակության կեցության ու գիտակցության-աշխարհայեցության, ինչպես և օտար ազդեցությունների հետ, եթե կան, ապա վերլուծության է ենթարկում այդ ստեղծագործությունների արվեստն ու զաղափարական կերպարները:

Երբուրդ շրջանը — եկեղեցական-քաղաքական մաքսոման գրականությունը բնության է առնված ժանրերի ժամանակագրական տեսագծով՝ բնդ-հանուր բրիստոնեական աշխարհայեցության քաղաքացիություն, պատմագրություն, վկայաբանություն, բանաստեղծություն-հոգևոր երգ, Գրիգոր Նարեկացի, որի ստեղծագործությունը՝ բովանդակելով շրջանի աշխարհայեցությունը, միաժամանակ պարունակում է «վերածնության շունչը»: Յուրաքանչյուր հեղինակ պատկերված է առանձին՝ նշելով նրա կյանքն ու գործը, գրական արվեստն ու աշխարհայեցությունը, հասարակական-զաղափարական ձգտումները և այլն: Եթե տվյալ հեղինակի ստեղծագործության մեջ արտացոլված է ժողովրդական-վիպական բանահյուսությունը, ապա վերջինս մանրամասն հետազոտված է ըստ նրա բովանդակության ու զաղափարախոսության, ըստ հորինվածքի ու արվեստի:

Երբուրդ շրջանը — վերածնության գրականությունը (Xl—XVII դդ.) «գրված խավորապես հայ քաղաքացության գրականությունն» է: Հայ հին գրականության այս շրջանը Մ. Արևիկյանն սկսում է մի հակիրճ ներածականով՝ դարաշրջանի կյանքի և աշխարհայեցության փոփոխության հետևանքով առաջացած վերածնության գրականության մասին, բնութագրում է տարբեր ձևերով արտա-



հայտնված նոր մտավոր հոսանքի առաջին փուլերը (Գրիգոր Մադիստրոս, Արիստակես Հաստիվերտցի, Հովհաննես Սարկավազ վարդապետ, Դավիթ Ալավկա որդի և այլք), ապա «Աշխարհիկ ոգու վերածնունդ» հատուկ գլխով անդրադառնում է ներսես Շնորհալու կյանքին և զեղարվեստական երկերի՝ բանաստեղծության ու պոեմների մանրակրկիտ վերլուծությանը: Հատուկ գլուխներ են հատկացված նաև առակագրությանը (Մխիթար Գոշ և Վարդան Այդեկցի) և պատմագրությանը: Վերջապես մեր միջնադարյան գրականության փայլ հանդիսացող բանաստեղծության համաստեղության (Ստ. Օրբելյան, Խաչ. Կեչառեցի, Ֆրիկ, Հովհաննես Երզնկացի կամ Պլուզ, Կոստ. Երզնկացի և այլք) երկերի մանրամասն վերլուծությանը:

Սա է ականավոր գիտնականի կյանքի վերջալուսին վերամշակված կամ նորից շարադրված «Հայոց հին գրականության պատմություն» խորագիրը կրող և սերունդներին ավանդ թողած վիթխարի գործի շատ հակիրճ նկարագրությունը: Այս աշխատությամբ հաստահիմն պատվանդանի վրա դրվեց հայ հին գրականության պատմությունը: Գրականության ապագա պատմաբանները՝ մեկնակետ ընդունելով այս հոյակապ գործը, պետք է քննեն ու լրացնեն, զարգացնեն նրա պատմագիտական թեզերը և դրեն գրականության այն հատվածի պատմությունը, որը ականավոր գիտնականը ժամանակին հնարավորություն չի ունեցել իր ավարտին հասցնելու:

Մի երկու խոսք Մ. Աբեղյան-մանկավարժի մասին:

40 տարի մանկավարժությամբ և շուրջ 60 տարի գիտահետազոտական աշխատանքով է դրադվել նա: Հազարավոր աշակերտ-ուսանող է ունեցել, որոնք նրանից լեզու և գրականություն են սովորել, որոնք նրանից գիտություն են յուրացրել, որպեսզի իրենց հերթին այդ ամենը հաղորդեն իրենց աշակերտներին-սերունդներին... Մեր դարի սկզբից մինչև այսօր կա՝ արդյոք մի հայկաբան կամ հայոց լեզվի ու գրականության մի ուսուցիչ, որ մասնազետ դարձած չլինի անմիջականորեն Մանուկ Աբեղյանի, կամ նրա դաստիարակած մանկավարժ-դասախոսների ղեկավարությամբ, կամ թե ինքնուրույն յուրացրած չլինի նրա գրական-գիտական ժառանգությունը: Մ. Աբեղյանը քսաներորդ դարի առաջին կեսի ամենավաստակավոր ու բազմակողմանի բանասերն է. նրա գիտական ժառանգությունը դեռ երկար, շատ երկար կփայլի հայագիտության բնագավառում:

Փառք մեծ վաստակավորին, որ իր պարտքը սրբությամբ կատարեց իրեն ծնող-սնող հայ ժողովրդի հանդեպ. հավերժ հիշատակ Մեծ հայրենասեր-գիտնականին:

#### МАНУК АБЕГЯН

(К 100-летию со дня рождения)

Академик АН Арм. ССР К. А. МЕЛІК-ОГАНДЖАНЫ

(Р е з ю м е)

Педагогическая и научно-исследовательская деятельность академика М. Х. Абега́на была целиком посвящена родному народу, памятникам его духовной культуры — устной и письменной, а также армянскому языку на разных стадиях его развития.

С юношеских лет и до самой смерти он неустанно исследовал почти все отрасли арменоведения по линии истории и истории литературы, филологии и фольклористики, языкознания и народных верований.

Капитальные его монографии — «Армянские народные сказания в «Истории Армении» Мовсеса Хоренаци», «Армянский народный эпос» («Сасна црер», «Давид Сасунский»), «Гусанские песни» — создали ему славу непревзойденного фольклориста, подлинного основоположника науки об армянском фольклоре. Долголетние изыскания по армянскому народному эпосу он увенчал (совместно с К. А. Мелик-Оганджяном) научным изданием «Сасна црер» в двух томах, трех объемистых книгах.

Монументальные исследования — «Григор Нарсекаци», «Армянские духовные песнопения—шараканы» — стяжали ему имя глубокого и всестороннего знатока древнеармянских литературных памятников. Это научно-общественное признание получило еще более прочное обоснование, когда маститый ученый выпустил на основании тридцати четырех рукописных сводов и многих изданий научно проверенный текст «История Армении» Мовсеса Хоренаци, который и поныне считается непревзойденным, или критически уточненный древнеармянский текст «Жития Маштоца» Корюна и перевод его на новоармянский с комментариями и предисловием.

Среди многочисленных историко-филологических трудов М. Х. Абе-гяна следует особо выделить «Историю древнеармянской литературы», по достоинству оцененную специалистами-арменоведами как незаурядное и незаменимое руководство по древнеармянской литературе. (Имеется русский перевод первого тома этого двухтомного труда).

В отличие от своих предшественников — историков армянской литературы, — он вводил в круг своих литературоведческих интересов не всякий письменный памятник, а лишь те произведения, которые представляют собой литературно-художественную ценность, написаны в красочно-риторической форме, согласно требованиям и правилам риторики.

М. Х. Абе-гян своей многогранной деятельностью оставил глубокий след во всех отраслях арменоведения.